Հավելված 8

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 55/2 որոշմամբ հաստատված «ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների պատրաստման և գնահատման կարգում» կատարված փոփոխությունները

**Գրված է**

6.2. Դասընթացի շրջանակում կատարված հետազոտական աշխատանքի արդյունքը հաշվի է առնվում տվյալ դասընթացի արդյունարար գնահատականում որպես երկու ընթացիկ քննություններից (ստուգումներից) երկրորդի գնահատական՝ եզրափակիչ գնահատումով դասընթացի դեպքում առավելագույնը 5 միավոր արժեքով, իսկ առանց եզրափակիչ գնահատման դասընթացի դեպքում՝10 միավոր արժեքով:

**Դարձնել**

6.2. Դասընթացի շրջանակում կատարված հետազոտական աշխատանքի արդյունքը հաշվի է առնվում տվյալ դասընթացի արդյունարար գնահատականում որպես երկու ընթացիկ քննություններից երկրորդի գնահատական:

**Գրված է**

6.4.Հետազոտական աշխատանքի գնահատումը կատարվում է հետևյալ չափանիշներով և համամասնությամբ (Տե՛ս Հավելված 5).

6.4.1.թեմայի արդիականության հիմնավորում և կատարման ինքնուրույնություն՝ առավելագույնը 0,5 (1) միավոր,

6.4.2.ստացված արդյունքների հիմնավորվածություն և հավաստիություն՝ առավելագույնը 1 (2) միավոր,

6.4.3.ստացված արդյունքների որակական և/կամ քանակական վերլուծություն՝ առավելագույնը 1 (2) միավոր,

6.4.4.աշխատանքի բանավոր ներկայացում՝ առավելագույնը 2 (4) միավոր (եթե աշխատանքը կատարվել և տրվել է դասախոսին, բայց բանավոր ներկայացում տեղի չի ունեցել, ուսանողը կարող է ստանալ միայն մյուս չափանիշների գծով տրվող միավորը, ուսանողի ամփոփիչ գնահատականը ձևավորվում է մյուս չափանիշներով),

6.4.5. համապատասխան եզրակացությունների առկայություն՝ առավելագույնը 0,5 (1) միավոր

**Դարձնել**

6.4.Հետազոտական աշխատանքի գնահատումը կատարվում է հետևյալ չափանիշներով (Տե՛ս Հավելված 5).

6.4.1.թեմայի արդիականության հիմնավորում և կատարման ինքնուրույնություն,

6.4.2.ստացված արդյունքների հիմնավորվածություն և հավաստիություն՝

6.4.3.ստացված արդյունքների որակական և/կամ քանակական վերլուծություն՝

6.4.4.աշխատանքի բանավոր ներկայացում՝

6.4.5. համապատասխան եզրակացությունների առկայություն

Հավելված 1.-ում՝

**Գրված է**

Խմբային հետազոտության աշխատանքի խմբի հաստատումը՝ յուրաքանչյուր կիսամյակի 4-րդ շաբաթվա ընթացքում

**Դարձնել**

Խմբային հետազոտության աշխատանքի խմբի հաստատումը՝ յուրաքանչյուր կիսամյակի մինչև 3-րդ շաբաթվա ավարտը

**Ավելացնել՝**

1. Հետազոտական աշխատանքի գնահատումը դասընթացը վարող դասախոսի հայեցողությամբ կարող է իրականացվել այլ դասախոսների մասնակցությամբ:
2. Հետազոտական աշխատանքը գնահատելու համար ուսանողի կողմից այն բանավոր ներկայացնելը պարտադիր է:
3. Հետազոտական աշխատանքը վերահանձնում չունի: